ՄԵՆՔ ՍՊԱՍՈՒՄ ԵՆՔ ՄԻԱՅՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒԾՄԱՆ

Ղարաբաղյան ճգնաժամից դուրս գալու ելքը միայն քաղաքական լուծման մեջ է, Արմենպրեսի թղթակիցներին ասաց ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ, կուսակցության Մարտակերտի շրջկոմի առաջին քարտուղար Վահան Գաբրիելյանը: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հոկտեմբերի 20-ին կայացած նիստում ԼՂԻՄ-ի հայազգի դեպուտատների դիրքորոշումը սկզբունքային էր, որը բխում է մեր ժողովրդի շահերից, ինչպես նաև մարզում ստեղծված իրավիճակից:

Գ. Տարազևիչի հանձնաժողովի ներկայացրած որոշման նախագիծը, որով նախատեսվում է վերացնել հատուկ կառավարման կոմիտեն և փոխարենը ստեղծել ժամանակավոր արտակարգ հանձնաժողով, ընդ որում Ադրբեջանի ներկայացուցչի մասնակցությամբ, բնականաբար չէր կարող բավարարել մեզ: Անգամ այն դեպքում, երբ նախատեսվում է վերականգնել կուսակցության մարզկոմը և մարզային խորհուրդը, նման հանձնաժողովի ստեղծումը՝ թեկուզև արտակարգ լիազորություններով և Մոսկվայի ենթակայությամբ, անընդունելի է:

Պետք է ասեմ, շարունակեց Վ. Գաբրիելյանը, հենց սկզբից մեզ համար պարզ չէր, թե ինչ է նշանակում ինքնակառավարվող ինքնավար տերիտորիա, ինչ ստատուս է այն ունենալու և ինչով է տարբերվելու ինքնավար մարզից:

Նախագահությունում խոսք գնաց այն մասին, թե ինչու են տեղական իշխանությունները ամեն ինչ բարդում կենտրոնական մարմինների վրա, երբ շատ հարցեր կարելի է լուծել հենց տեղում՝ երկու հանրապետությունների և ԼՂԻՄ-ի ներկայացուցիչների միջև կայացած երկխոսությունների օգնությամբ: Դրան մենք առարկեցինք, ասելով, որ ազգամիջյան ճգնաժամը այնքան է խորացել, որ այդ հարաբերությունները վաղուց արդեն անցել են այն գիծը, որից հետո երկխոսությունը հնարավոր չէ, և որ կենտրոնական կառավարության միջամտությունը այսօր դարձել է օբյեկտիվ անհրաժեշտություն:

Ես իմ ելույթում հստակ ասացի, շարունակեց Մարտակերտի շրջկոմի առաջին քարտուղարը, որ եթե Լեռնային Ղարաբաղը դուրս չի բերվում Ադրբեջանի կազմից, անմիջապես չի ենթակայացվում կենտրոնական կառավարությանը, դա հարցի լուծում չէ:

Ժողովրդական դեպուտատի նման հայտարարությունը ամենևին էլ նրա քմահաճույքը չէր: Ինչպես ասաց նա, մենք պարտավոր ենք հաշվի առնել ժողովրդի կամքը, մանավանդ որ անցած 70 տարիները ցույց են տվել, թե ինչ ասել է լինել ինքնավար ազգային միավորում Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմում: Կյանքը ցույց է տվել նման ֆեդերատիվ կառուցվածքի անհեռանկարությունը, ուստի և պետք է նոր մոտեցում ազգային կազմավորումների ստատուսը որոշելիս: Ես ստիպված էի հայտարարել, որ Գ. Տարազևիչի հանձնաժողովի ներկայացրած որոշման նախագիծը չի համապատասխանում Լեռնային Ղարաբաղի հայության շահերին, ուրեմն այն անընդունելի է: Եվ եթե մենք ընդունենք նման մի որոշում, ապա էլ ավելի կխճճենք ազգամիջյան հարաբերությունների առանց այն էլ խճճված կծիկը:

Իսկ եթե այսօր ԼՂԻՄ-ը Հայաստանին վերամիավորելը անհնարին է, ապա այն Ադրբեջանի կազմից դուրս բերելը և կենտրոնին ենթակայացնելը միակ ճիշտ ելքն է:

Նման ոգով էին նաև ԼՂԻՄ-ի մյուս դեպուտատների ելույթները, որոնք արտահայտելով իրենց ընտրողների կամքը, անընդունելի համարեցին ներկայացված նախագիծը:

— Ընկեր Գաբրիելյան, կենտրոնական հեռուստատեսությամբ ու մամուլում եղավ հայտարարություն այն մասին, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստում մշակվել են հարցի քաղաքական կարգավորման առաջարկություններ, որոնք տրվել են Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդին և ԼՂԻՄ-ից ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատներին: Որքանո՞վ է դա համապատասխանում ճշմարտությանը:

— Դա բացարձակապես չի համապատասխանում ճշմարտությանը: Ուղղակի առաջարկություն է եղել մշակել որոշման նոր նախագիծ: Մենք՝ Լեռնային Ղարաբաղի դեպուտատներս ոչ մի առաջարկություն չենք ստացել: Մենք ամենաակտիվ մասնակցությունը ենք բերել նախագահության նիստին, փորձել ենք մեր ժողովրդի ցավն ու տառապանքը հասցնել ներկաներին և հաստատ մնացել մեր դիրքորոշման վրա: Հենց մեր այդ հստակ դիրքորոշման շնորհիվ էր, որ նախագահությունը որոշման նախագիծը մերժեց ու պահանջեց պատրաստել նոր նախագիծ:

Ջ. ԲԱԼԱԳՅՈԶՅԱՆ
Լ. ԱԶՐՈՅԱՆ
(Արմենպրեսի հատուկ թղթ.)
Մոսկվա